ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«17» մայիսի 2016 թ. N 247-Ն

ք.Ստեփանակերտ

ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2015 ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 12-Ի N 52-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Իրավական ակտերի մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքի 71-րդ հոդվածը՝ Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարությունը ***ո ր ո շ ու մ է.***

1. Լեռնային Ղարաբաղի Հանրապետության 2015 թվականի փետրվարի 12-ի «Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունում կերարտադրության և անասնաբուծության զարգացման 2015-2017 թվականների ծրագիրը հաստատելու մասին» N 52–Ն որոշմամբ հաստատված հավելվածում կատարել հետևյալ փոփոխությունները և լրացումը՝

1) ներածության 3-րդ պարբերությունը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կերարտադրության և անասնաբուծության զարգացման 2015-2017 թվականների ծրագրով (այսուհետ՝ Ծրագիր) ներկայացվում են բազմամյա կերային մշակաբույսի (այսուհետ՝ կորնգան) մշակության համար 2015-2017 թվականներին իրականացվելիք միջոցառումները և ակնկալվող արդյունքները:».

2) 2-րդ գլխում՝

ա. «սերմացու» բառը բոլոր հոլովաձևերով փոխարինել «սերմ» բառի համապատասխան հոլովաձևերով,

բ. 2-րդ պարբերությունից հետո լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր պարբերություն.

«Տրամադրված սերմով կկատարվի կորնգանի ցանքս՝ տվյալ տարվա գարնանը և աշնանը: Սահմանված ժամկետում կորնգանի ցանքս չկատարելու դեպքում տրամադրված սերմի արժեքը հողօգտագործողների կողմից ենթակա է վերադարձման պետական բյուջե:»

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող տասներորդ օրը:

ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ